


369(91.542)
5-98

5552

ՐԱԳԻՐ

ՏԱՅՔԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ
ՄԻՈՒԹԵԱՆ

(Հիմնած 1917 թ. յուղիսին, վերակազմ-
ած 1918 թ. յունիսին):



Տպարանատեր

ԵՐԵՎԱՆ ԹՈՎՄԱՆՈՒՄԱՆ ՀՈԽՎԱՐԵԱՆՑ

ԽԵՆՔՆԱԳՐ, ԲՈՒՐԱԿԱՆ 85

062 (=91.9)

1919

S - 19



300

1345-ԾՐ

062 (= 91. 93)

S - 19 ՏԱՅՔԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԵՆ
ՄԻՈՒԹԵԱՆ

(Հիմնած 1917 թ. յուլիսին, վերակազմ-
ած 1918 թ. յունիարին):

1003
11855

Տպարանատէր
ՄԱՐՏԻ ԹՈՎՄԱՆԵԱՆ ՃՈՒԱՐԵԱՆՑ

Եկատերինուպուր, Բուրժակավակ 85

1919

ԾՐԱԳԻՐ

ՏԱՅՔԻ ՀԱՅՐԵՆԱԿՑՈՎԱՆ ՄԻԱԽԹԵԱՆ^{*)}

I.—ՆՊԱՏԱԿ

Տայքի Հայրենակցական Միութեան
նպատակն է, նիւթապէս ու բարոյապէս
օժանդակել բնաջնջումն աղատւած հայ
կարօտեալներուն, օգնել հայրենակիցնե-
րուն վերադառնալու իրենց ծննդավայրը
և նիւթական ու բարոյական զոհաբերու-
թիւններով զարկ տալ ծննդավայրի վե-
րաշինութեան:

II.—ԳԼՐՄԱԽՆԵՐԻԹԻՒՆ

ա.—ԳԵՐԱԴԱՐՁ

Տայքի Հայրենակցական Միութիւն իր
նպատակները իրազործելու համար, հե-
տեւել գործունէութեան կը ձեռնարկէ:

1.—Կը քաջալերէ ներգաղթը;

2.—Կը կաղմակերպէ խուզարկու-
լոմբեր գրաւած փայտերու և Տաճկաստա-
նի խորքերու մէջ տարագրած բեկորները
գտնելու և վերադարձնելու համար (ըստ
պահանջին խուզարկու մարմիններուն
թիւն ու կաղմը կ'որոշը):

^{*)} ԺՂՆՕԹ.—Խռոտու Մոհիրակոյացի արք-
արեալներու ազատվան համար կազմած՝ միու-
թիւնը, իր գործներութեան առարկէզը քննիածա-
կելու համար, միասման Տայք Հայրենակցա-
կան Միութեան:

3.— Կը հեշտացնէ տարագիրներու վերադարձը, տալով անոնց նիւթական ու բարոյակոն հնարաւորութիւններ:

4.— Կարիքաւորներուն համար կը մատակարարէ զգեստ, սնունդ, ճանապարհածախս, օթևան, բժշկական օգնութիւն և այլն:

5.— Կորոնէ ու կը հաւաքէ որբերը և զանոնք կը խնամէ որբանոցներու մէջ:

բ.—ՎԵՐԱՇԽՆՈՒԹԻՒՆ

Տայրի Հայրենակցական Միութիւնը ամեն ջանք կը թափէ երկրի վերաշինութեան համար և այդ նպատակով.

1.— Կօժանդակէ ժողովրդին ու երիտասարդութեան կազմակերպմանը, գործակցութեան հրաւիրելով հայրենիքի բուռո զաւակներուն:

2.— Կը կազմակերպէ թաղային միութիւններ:

3.— Կը հիմնէ զանազան կուլտուրական հիմնարկութիւններ (գպրոց, գրադարաններցարան, լսարան, մամուլ և այլն):

4.— Երկրի մէջ ձեռք կառնէ կեանքի և գոյրի ապահովութեան միջոցներ:

5.— Երկրի մէջ ժամանակաւորապէս կը մտցնէ համայնական աշխատանք:

6.— Պէտք եղած ատեն յարաբերութեան մէջ կը մտնէ պետական և ազգային պաշտօնական հիմնարկութիւններու հետ և

անոնց աջակցութիւնը կը խնդրէ իր նըպատակները իրագործելու համար:

7.— Անտէր մնացած հայրենակիցներու շարժական և անշարժ կալւածները թէ Խուսիոյ և թէ Թիւրքիոյ մէջ, իր պաշտպանութեան տակ կառնէ, կը պաշտպանէ աւերութեան բռնի ու ապօրինի գիւաւութեանէ, մինչև անոնց իսկական տէրերուն յայտնիլը: Խոկ ժառանգքունեցող հայրենակցի շարժական և անշարժ գոյքերը կը մնան թաղային այն միութեանը, որուն կը պատկանի ժառանգատէրը:

III.— ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

1.— Տայրի Հայրենակցական Միութեան կարող են անդամակցել Հայաստանի, Տաճկաստանի, Խուսիոյ և ուրիշ վայրերու մէջ գտնւող Տայրի բոլոր այն հայրենակիցները, որոնք կընդունեն միութեան ծրագիր-կանոնագիրը, կաշխատեն իրականացնել զայն կեանքի մէջ և կը վճարեն անդամակցական որոշ վճար (անկարողներուն վիճակը նկատի կ'առնեի):

2.— Միութեան անդամները կը համարւին պատառու և իսկական:

3.— Համագումարը միութեան պատւառոր անդամ կրնարէ այն անձանց, որոնք միութեան առանձին ծառայութիւն մը մատուցած կամ յալտնի գործ մը կա-

տարած են:

4.—Պատւաւոր անդամ կը նկատւին նաև անոնք, որոնք միութեան կը վճարեն բացի անդամափարէն նաև ոչ նւագ քան տասն հազար (10,000) ռուբլի: Իսկ յիսուն հազար (50,000) ռուբլի վճարողները կանւանւին բարերար:

5.—Իսկանդան անդամ կը համարւեն անոնք, որոնք միութեան կը վճարեն ամսական ոչ պակաս քան հինգ ռուբլի և միանւագ գումար մը:

IV.—ԳՈՐԾԵՐՈՒ ՎԱՐՈՒՄԸ

Միութեան ընդհանուր գործերը կը վարեն միութեան համագումարն ու կեղրոնական վարչութիւնը:

ա. — ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

1.—Նկատի ունենալով որ միութեան անդամներն ու ճիւղիրը ցրւած են Ռուսիոյ, Տաճկաստանի և Կովկասի զանազան վայրերու մէջ, վարչութեան որոշած ցէնզի համաձայն, ներկայացուցչական ճեղով տարին անդամ մը, լուսւարի կամ նպատակայարմար ամսոյն մէջ՝ կը հրաւիրւի համագումար:

2.—Արտակարգ համագումարը կը հրաւիրւի, երբ անլետածգելի և խիստ կարեոր հարցերու ըննութեան կարիք կայ (ծանօթ.՝ Արտակարգ համագումարը կը

հրաւիրւի՝ 1) վարչութեան հրաւերով, 2) վերստուգիչ մարմնի պահանջով և 3) միութեան անդամներու գրաւոր խնդրանքով և հարիւրի հասնող ստորագրութեամբ):

3.—Համագումարի զբաղման առարկաներն են, միութեան նախընթաց տարւայ գործունէութեան զեկուցումը, առաջիկայ տարւայ նախահաշիւր, վարչութեան և վերստուգիչ յանձնաժողովի ընտրութիւնը, նոր օրակարգերու կազմումն ու որոշումները:

4.—Համագումար օրինական կը համարւի, երբ անդամներուն կէսէն մէկ ձայնով աւելի ներկայ են (միութեան լուծման ժամանակ երկու երրորդով), մեծամասնութիւն չկազմելու ժամանակ, համագումարը վեց օրով կը յետաձգւի և վարչութեան կողմից կը լինի նոր հրաւեր, երկրորդ անդամ որբան անդամ ալ որ ներկայ ըլլան, ժողովը կը համարւի օրինական:

5.—Համագումարի տեղի և ժամանակի մասին, վարչութիւնը կը յայտարարէ երկու ամիս առաջ պաշտօնական նամակներով և տպւած յայտարարութիւններով:

6.—Համագումարի և ընդհանուր ժողովներու մէջ՝ իւրաքանչիւր ներկայացուցիչ կօգտուի մէկ ձայնի իրաւունքով և զայն ուրիշին տալու իրաւունք չունի:

բ. — ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

1. — Վարչութիւնը կընտրւի համագումարէն գաղտնի քէարկութեամբ և կը վարէ միութեան վարչական ու զործնական բնոյթունեցող բոլոր զործերը:

2. — Վարչութեան անդամներութիւը տասնէ, որոնց երեր փոխանդամ:

3. — Վարչութիւնը կրնտրւի մէկ տարւայ պայմանաժամով և անդամները վերընարելի են:

4. — Վարչութիւնը իր մէջն կրնտրէ նախագահ, քարտուղար և գանձապետ ու բոլոր անդամները վարձատրութիւն չեն ստանար:

5. — Վարչութիւնը միութեան գործունէութեան կեղրոնական վայրը կը հիմնէ գործադիր մարմինին մը, բազկացած հինգ անդամէ (նախագահ, քարտուղար, գանձապահ և երկու անդամ), որը կը նշանակի կեղրոնական վարչութեան կողմէ մէկ տարի պայմանաժամով: Նախագահն կստանայ ամսաթոշակ:

6. — Վարչութիւնս կունենայ շաքաթական հերթական նիխոտեր. բոլոր հարցերը կը վճռւեն ձայներու հաստրակ մեծամասնութեամբ. հաւասարութեան ժամանակ նախագահի ձայնը գերակշռութիւն կունենալաւ:

7. — Սկզբունքային հարցեր ծագած ժամանակ, վարչութիւնը իրաւունք ունի կոմիտէներու խորհրդակցութեան ժողով գումարել, իսկ իուշոր կարեսորութիւն ունեցող պատասխանատու հարցերը յօւծելու համար. վարչութիւն պարտաւոր է համագումար հրաւիրել:

8. — Վարչութիւն պարտաւոր է տարին անգամ մը համագումար հրաւիրել իր հաշիւներն

ներկայացնելու և զործերու մասին գեկուցելու համար:

9. — Վարչութեան անդամները անհատաբար և հաւաքաբար համարատու և պատասխանատու են համագումարի առջև, իսկ շրջանի բոլոր մասնաճիւղերը իրենց հերթին համարատու և պատասխանատու են կեղրոնական վարչութեան:

գ. — ԳՈՐԾԱԴԻՄ ՄԱՐՄԻՆ

1. — Միութիւնը իր գործունէութեան կեղրոնակալրին մէջ կունենայ գործադիր մարմին մը, բազկացած հինգ անդամէ (նախագահ, քարտուղար, գանձապահ և երկու անդամ), որը կը նշանակի կեղրոնական վարչութեան կողմէ մէկ տարի պայմանաժամով: Նախագահն կստանայ ամսաթոշակ:

2. — Գործադիր մարմինը կը վարէ գործունէութեան վայրի բոլոր գործերը՝ կազմակերպչական, կառավարչական, կուլտուրական, վերաշինական, գուղթականական և ինքնապաշտպանական:

3. — Գործադիր մարմինն հրաժարւած անդամի փոխարէն՝ նախագահը ժամանակաւոր անդամ կը հրաւիրէ տեղական կոմիտէի անդամներէն մին՝ քատ իր հայեցողութեան և այդ մասին կը հազորդէ կեղրոնական վարչութեան, որը կամ կը հաստատէ կամ ուրիշ մը կը նրանակէ:

4. — Գործադիր մարմին իրաւասու է միութեան կանոնագրով հետապնդւած բոլոր

Նպատակները իրազործել և բոլորի մասին
միշտ տեղեակ պահել կեզրոնական վարչու-
թիւնը:

5.— Գործադիր մարմին ընթացիկ ժախ-
սերի համար իր տքամազրութեան ներբոյ
կունենայ ուժուուն հազոր (80,000) ռուբլի,
որը կը գործածի կանոնազրի հետապնդած
նպատակներուն համար:

6.— Գործադիր մարմին իրաւունք ունի
ոչ աւել քան քսահնինգ հազար (25,000) ռուբ-
լի միանուագ յատկացնել սեէ կարեոր նպա-
տակի (ծալրայեղ պարագային հարցը լուծել
յօդւած 9-րդի համաձայն):

7.— Գործունէութեան վայրի բոլոր կոմի-
տէները կենթարկեին գործադիր մարմին, որը
կոմիտէներուն վրայ կը նշանափէ բոնթրոյ, կը
հաւարէ և կը կեզրոնացնէ կոմիտէներու բով ե-
ղած գումարները:

8.— Որոշւած քանակէն աւելի գումարնե-
րը, գործադիր մարմինը անմիջապէս կը փոխա-
ղը կեզրոնական վարչութեան սնդուկ:

9.— Ստիպողական և արտակարգ գործե-
րու ժամանակ, եթէ հնարաւորութիւն չկայ
կեզրոնական վարչութեան կարծիքն իմանալ,
գործադիր մարմինը շրջանի բոլոր կոմիտէնե-
րուն կը հրաւիրէ խորհրդակցութեան և կստա-
նայ անոնց խորհուրդը, բացի կանոնազրում
համագումարին վերապահած սկզբունքային
հարցերէն:

Դ.— ԿԱՄԻՏԵՆԵՐ ԵՒ ՄԱՄԱՋԱՋԻՂԵՐ

1.— Գործադիր մարմին գործունէութեան
շրջանի գանազան վայրերու մէջ, տեղական
անդամներու ընդհանուր ժողովներէն կը կազ-
մւին մտսնածիւզեր և կընտրւին կոմիտէներ՝
տեղական գործերը վարելու համար:

2.— Ըրջանային կոմիտէներն ու մասնա-
ճիւզերը կենթարկեին գործադիր մարմին կար-
գագրութիւններուն և անոր հետ սերտ կապակ-
ցութեան մէջ կրլան:

3.— Տեղական կոմիտէներուն թիւն ու
կազմը կորոշէ տեղական ընդհանուր ժողովը:

Ե.— ՎԵՐՍՈՒԻԳԻՉ ՍԱՐՄԻՆ

1.— Վերսուուգիչ մարմինը կը բաղկանայ
երեք սնդամէու կընտրւի համագումարից զաղտ-
նի քւէարկութեամբ և մէկ տարի ժամանակով:

2.— Վերսուուգիչ մարմին իրաւանութիւնն
է, քննել վարչութեան հաշիւները, ստացած
իրերուն ցուցակն ստուզել և հաշիւներն ու
նկատողութիւնները գեկուցել համագումարին:

3.— Վերսուուգիչ մարմինը պարտաւոր
է երեք ամիս անգամ ըննել վարչութեան հա-
շիւները. իսկ բացառիկ հանգամանքներու մէջ
երբոր կամենայ ազատ է:

4.— Վերսուուգիչ մարմին իր գործունէու-
թեանը համար պատասխանատու է համագու-
մարին առջև:

5.— Ըրջանային կոմիտէներուն կից՝ շըր-

ջանեների ըսդհանուր ժողովները իրաւասու են
վերստուգիշ մարմինները ընտըլու:

V.— ՄԻՈՒԹԵԱՆ ՄԻԶՈՑՆԵՐԸ

1.— Միութեաննիւթեական եկամուտներն
են՝ անդամավճարներ, միանւագ վճարումներ,
հանգանակութիւններ, պատւաւոր անդամակ-
ցութիւն, բարեգործութիւն, զրամագլխի տո-
կոսներ, կալւածներու և գոլքերու հկամուտ-
ներ, երեկոյթներ, վիճակախաղ և ալլեն:

2.— Միութեան զրամագլուխը պահելու
է կառավարական կամ մասնաւոր բանկերու
մէջ՝ միութեան անունով. իսկ գանձապահի
մօտ կը մնայ առձեռն գումար մը, որ կ'որոշ-
չի փարչութեան կողմէ:

3.— Բացառիկ պարագաներու մէջ կեղ-
րոնական փարչութիւնը կարող է միութեան
զրամագլուխը ժամանակաւորապէս պահել ա-
պահով փայթեր՝ ըստ իր հայեցողութեան:

4.— Երբ մեծ գումարի կարիք զգացւի,
միութեան համազումարը կորոշէ պարտադիր
վճար ըստ կարողութեան և գանձումն ու գոր-
ծադրութիւնը կո յանձնարարէ փարչութեան:

VI.— ԸՆԴԱՍՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1.— Միութեան կեղրոնական փարչու-
թիւնը, առայժմ կը գտնի ներքին Ռուսիոյ
մէջ:

2.— Համագումարի որոշումներն ու հա-
շիւները եւ միութեան գործունէութեան

ընդհանուր պատկերը, պէտք է տպագրւի գո-
նէ տարիի անգամ մը և տարածւի հասարա-
կութեան մէջ:

3.— Միութեան կնիքը գործածելու իրա-
ւոնքն փերապահւած է կեղրոնական փարչու-
թեան և գործադիր մարմնին:

4.— Ջրանային մարմիններն ու կոմի-
տէները ունենալու հնիրենց յատուկ կնիքները:

VII.— ՄԱՍՆԱԿԻՈՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1.— Երբ գործող մարմինները վատ վե-
րաբերեն իրենց գործին կամ յանձնած զը-
րամը վատնեն կամ կեղծ փաստաթղթերով
գումարը ծախսւած ցոյց տան, այդպիսիները
անմիջապէս գործէ կը հեռացւին և կը յանձն-
ւին ընկերական դատարանի. եթէ հաստատ-
ւեցաւ արդպիսիներուն յանշաւոր րլլալը և
վնասներու հատուցումը չստացաւ միութիւնը,
փերջինս պարտաւոր է տմբաստանողին յանձ-
նել պետական դատարանին:

2.— Միութեան գործերու մէջ թերացող-
ներն ու անպատճախանատու անդամները կը
հեռացւին միութեան շարքերէն:

3.— Կեղրոնական փարչութիւնը պարտա-
ւոր է այս կամ այն պաշտօնեալի փերաբեր-
մամբ. միութեան անդամներու կողմէ գրաւոր
և պատճառաբանւած նկատողութիւններուն
ընթացք տալ:

VIII.—ՄԻՈՒԹԵԱՆ ԼՈՒՇՈՒՍԸ

1.—Միութեան լուծումը կորոշւի համագումարի կողմէ, ձայներու երկու երբորդով:

2.—Լուծւելու պարագային, միութեան գումարներու, գոյքերու և ստացւածքներու տնօրինութիւնը կորոշէ համակոմարք, ըստ իր հայեցողութեան:



0072851

2001

2013 5552



Ներկայ ծրագիրը մշակւած ու
փառերացւած է 1918 թ. յունիս-
բի համագումարէս: